

ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Զատիկական մեծ տօներն անցան սովորական հանդիսաւորութեամբ: Նորին Սրբութիւնը զանուելով իւր միաբանութեան մէջ, յաճախ ներկայ էր լինում և առանձին շուք էր տալիս կատարուող հանդէսներին՝ չը նայած որ վեհ. Հայրապետի ծննդեան 83-րդ տարեդարձը տօնեց միաբանութիւնը մի քանի օր առաջ (ապրիլ 4), հայրապետական մաղթանք կատարելով և աղօթելով ի սրտէ առ Աստուածն սրբոց Գրիգորի, Ներսիսի և Սահակայ, որ երկար տարիներ և անդորր կեանք շնորհէ Մեծ Հայրապետին և հասարակաց Հօրը ի մխիթարութիւն իւր տառապեալ հօտի: Զատիկի առաջին օրուան ժամերգութիւնը երկար լինելով և պատարագը քառաձայն երգեցողութեամբ, Նորին Սրբութիւնը իւր քարոզը յետաձգեց մեռելոցի երկուշաբթին: Ս. Գայիանէի տաճարում, ուր կատարուում է ս. պատարագը մեռելոցի օրերին, Նորին Սրբութիւնը մեծ ոգևորութեամբ պատմեց Փրկչի յաղթանակը կրկնակի տեսութեամբ, առաջին՝ յաղթանակ Փրկչի ի կենդանութեան ընդդէմ աշխարհի, և երկրորդ՝ յաղթանակ ընդդէմ մահու և դժոխքի. նկարագրեց զեղեցիկ կերպով իւրաքանչիւր նահապետաց և մարգարէից կոչը Փրկչի կողմից դժոխքի մէջ՝ բանաստեղծական ոճով, և նոցա պատասխանները առ ազատող Փրկիչն, և ապա ընդհանուր յաղթանակն երգը ազատեալ գերելոց: Իւրաքանչիւր պարբերութեան վերջը Հ. Կոմիտասի երգեցիկ խմբի փոքրերի դասը սրտառուչ կերպիւ եղանակում էր. «Օրհնեցէք մանկունք քաղցրաձայն երգով զյարուցեալ Փրկիչն»:

Մայիսի 12-ին, երեման ս. Խաչի օրը, Նորին Սրբութիւնը մեծ շքով կատարեց (եւթերորդ անգամ) եպիսկոպոսական ձեռնադրութիւն: Ձեռնադրուողներն էին այս անգամ վանի Առաջնորդական տեղապահ և Լիմ անապատի վանահայր

Տ. Սահակ և Ամասիոյ ու Մարգուանի միացեալ վիճակաց Առաջնորդ Տ. Արիստակէս Տ. վարդապետներ, որոնց Ռուսաստան անցնելու հրամանը հրատարակուելուց յետոյ փութացել էին օր առաջ ի Մայր Աթոռ ժամանել: Նորին Ա. Օծու թիւնը հաղած ունէր Հայրապետական ճոխ զգեստ, համակ սպիտակ՝ կրծքին կախած Հայրապետական տկանակուռ Մեծ Արծիւը, որ ընծայուած է երջանկայիշատակ Սիմէօն կաթողիկոսին և պահուում է Մայր Աթոռի սրբութեանց թանգարանում: Առջևից շարժուում էր եպիսկոպոսացուաց վկաների հանդիսաւոր գնացքը, որոնց զլուխ էին Գերաշնորհ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրենեանց և Տ. Մակար եպիսկոպոսական ընծայացուններին առաջնորդում էր Գեր. Տ. Յովհաննէս եպսկ. Նիրակունին (խարտավիլակ), իրրե թարգման և միջնորդ խնդրարկու վկայից առաջի գահայից Նորին Սրբութեան:

Յիրաւի Հայաստանեայց եկեղեցական հանդիսից և արարողութեանց մէջ բոլոր հանդէսներից շքեղ և յուզիչ է եպիսկոպոսական ձեռնադրութիւնը: Բաւական է յիշել հայրապետական այն հարցը, ուղղուած առ ընծայեալներն. «Եղբայր, ճշմարտութեամբ եկիր յայսքան վաստակ»: Հետեւում է վերջնոյս համեստ պատասխանը. — «Տէր, չէի բաւական այսմ շնորհի, սակայն եղբարքն իմ՝ ընտրեցին զիս: — Գիտնս արդեօք թէ յինչ կոչիս: — Աւսո՛ զիս, Տէր: Ապա հարցնում է Հայրապետ և խոստում առնում նուիրեալից. «Մնդրե՛ս թողուլ զքո սովորութիւնդ որ յառաջ և մաքրել և Աստուծոյ զօրութեամբն ըստ կարողութեանդ փոփոխել յամենայն բարիս: Կամի՞ս մնալ խողաղութեամբ և ժուժկալութեամբ առ քեզ և ուսուցանել զսոյն այլոց: Կամի՞ս զլինելն խօսակից աղքատաց յօժարութեամբ և ողորմած ի վերայ անանկաց և ի վերայ ամենայն կարօտելոց վասն անուանն Աստուծոյ»: Այս հարցերին պատասխանում է ընծայեալն. «Այո, Տէր, կամիմ յօժարութեամբ և ին», և Հայրապետը հրամայում է հետզհետէ բարձրացնել նուիրեալին մինչև յեօթներորդ աստիճան: Ապա տալիս է վերջին ահաւոր հարցը. — «Կամի՞ս մնալ հնազանդութեամբ ի ներքոյ բարձր իշխանութեան մեծի

Աթոռոյս առաքելոցն Բարդուղիմէոսի և Թագէոսի և սրբոյն Պրիգորի Լուսաւորչին մերոյ և Յաջորդի նոցին, և այնոցիկ՝ որք զինի Մեր նստցին յԱթոռս յայս, և յոչ հնազանդելն քո յանձն առնուա նզովս յԱստուծոյ և ի Մէնջ:— Պատասխանում է. «Այո՛, յանձն առնում կատարել զհրամանս Ձեր, հնազանդելով Մեծի Աթոռոյս և Ձեզ և կալ ի ներքոյ իշխանութեան Ձերոյ մինչև ի սպառել շնչոյս. իսկ ի հետեւն իմ նզովս ընկալայց յԱստուծոյ և ի Ձէնջ մինչև զղջացայց»: Հայրապետը հրամայում է. «Եւ որովհետեւ այդպէս է՝ ածէք զդա ի վերայ Արծուոյն, ի խորհուրդ բարձրաթախչ և երկնաքնաց լինելոյ դորա ի հաճոյսն Աստուծոյ և ի նշան սրատես մտօք խելամուտ լինելոյ ուխտին իւրում, զի մի՛ մոռասցի զոր խոստանայն»:

Ապա տեղի են ունենում հերետիկոսաց նզովքը, ուղղափառ Հայրապետաց հետեոգութեան խոստումը և կոչման վերջին օրհնութիւնը, որից յետոյ անցնում են աւագ սեղանի վերայ և «ողջոյն»-ից առաջ սկսուում է բուն ձեռնադրութեան և օծման կարգը. յետ որոյ դրւում է օծեալի գլխին եպիսկոպոսական թագը, ձեռքին հովուական դաւազան՝ «առ ի զչարագործսն դատել արդար և անաչառ իրաւամբք և զհնազանդսն հովուել և արածել յօրէնս և ի պատուիրանս Աստուծոյ»: Ապա տալիս է մատանին աջ ձեռքի ձկոյթ մատին, «առհաւատչեայ հաւատարիմ՝ ի մնալ զգուշութեամբ յաստուածային իւր փեսայութեան ս. Եկեղեցւոյ ճշմարիտ և ուղիղ հաւատով»: Յետոյ յանձնում է ս. Աւետարան՝ «ի գնալ և քարոզել ժողովրդեանն Աստուծոյ, որ նմա հաւատացաւ»: Ապա վերջին աւետարանը կարդում է ինքը Հայրապետը, պահպանիչով փակում է հանդէսը, և շարունակում է պատարադը:

Եպիսկոպոսական ձեռնադրութեան երկրորդ օրը նորին Արքութիւնը՝ յոգնած լինելով և շոգերից նեղուած, ցանկացաւ մի կարճ ճամբորդութիւն անել, և վերցնելով իւր հետ դիւանապետ Տ. Կորիւն վարդապետին մեկնեց Երևան, Սևան, Դիլիջան, Հաղարծնի վանքը, Ղարաբլիխէ, Աղէքսանդրապոլ, և այնտեղից մայիս 22-ի երեկոյեան երկաթուղով ժամանեց

ի Մայր Աթոռ, ուր անմիջական գործերը կատարելուց և մի քանի օր մնալուց յետոյ, մի երկու օրով առանձնացաւ իւր ամառանոցը Բիւրական:

Յունիս ամսուայ 10-ին սկսուեցին Հայաստանի լուսաւորութեան նախապատճառ ս. Կուսանաց տօնախմբութիւնները՝ Հռիփսիմեանց և Գայիանեանց, որ հասարակօրէն աւելում է «Էջմիածնայ տօնական շաբաթ», և իւրաքանչիւրի տօնը և պատարագը կատարուում է նոյն սրբուհեաց վանքերում: Մայր Աթոռի միաբանութիւնը իւրիշ հափառ Հայրապետի ի գլուխ և Հոգեւոր ձեմարանի աշակերտների և համայն Աղադարշապատի ժողովրդեան մասնակցութեամբ գիտէ շքեղապէս տօնել իւր Եկեղեցւոյ նահատակաց տօները:

Շաբաթ օր յունիս 15-ին՝ ս. Լուսաւորչի Եւն ի Վիրապէն տօնը կատարելուց յետոյ, երեկոյեան Նորին Սրբութիւնը բարեհաճեց վեհարանից մեծ հանդիսաւորութեամբ՝ թափօրով և Հրաշափառով, իջնել Մայր Տաճարը և ներկայ լինել երեկոյեան ժամերգութեան: Կիւրակէ, յունիս 16, տօն Աթուղիկէ Սրբոյ Էջմիածնի՝ աւելի շքեղութեամբ կատարուեց, ի ներկայութեան խուռն բաղմութեան, որ եկել էին Երևանից և շրջակայ գիւղերից: Նոյն օրը Վանքի սեղանատանը հանդիսաւոր ճաշ կար, որին և նախագահում էր սկզբում Նորին Սրբութիւնը, բայց յոգնած ստիպուեցաւ շուտ մեկնել սեղանից, յանձնարարելով միաբանից շարունակել հանդէսն ըստ իրենց սովորութեան: Առաջին բաժակն առաջարկեց Գեր. Տ. Բարդուղիմէոս սրբազան Մայր Աթոռի հաստատութեան և յարատեւութեան համար, ապա առաջարկուեցան Վեհ. Հայրապետի, միաբանութեան և այլ կենացներ: Երգում էր ձեմարանի խումբը:

Նոյն երեկոյեան Նորին Սրբութիւնը վերստին մեկնեց Մայր Աթոռից դէպի Երևան և Սեան, ուղեկցութեամբ Իւր դիւանապետի և իւրաքանչիւր վանքի մէջ երկու օր հանդըստանալով, ամսի 25-ին, Տփլիսից յատուկ եկած սալոն վազոնով, Ղարաբիլիսայից մեկնեց Աղեքսանդրապոլ և ապա կողքով Հառիժի վանքը, ուր մնաց երկու օր և ս. Էջմիածնից բերուած սեւիական ձիերով հեծեալ մեկնեց

դէպի Մայր Աթոռ՝ այցելելով Ապարանի գիւղերը, Սաղմոսա-
վանք, Մողնւոյ վանքը, Սշական, և յունիս 29-ին երեկոյ-
եան ժամը 9¹/₂-ին հասաւ ողջամբ ի Մայր Աթոռ:

Կարիւն վարդապետ

Այս ամառուայ արձակուրդին Մայր Աթոռից մեկնեցին
դէպի զանազան ամարանոցներ կաղզուրուելու համար միա-
բաններէից՝ Գեր. Տ. Յովհաննէս եպիսկ. Շիրակունին, Բարձր.
Տ. Հմայեակ Տ. Սարգսեան, Տ. Սահակ, Տ. Մխիթար, Տ. Եղ-
նիկ, Տ. Յուսիկ վարդապետները, և միաբան Գալուստ Տ.
Մկրտչեան:

Իսկ վերադարձաւ Գեր. Տ. Յուսիկ եպս. իւր եր-
կամեայ արձակուրդից: Ժամանակաւոր այցելութեամբ եկան
Տ. Եղիշէ Ծ. վարդ. Մուրադեան Բագուից և Տփլիսից, Տ.
Քենիկ վարդ. Շուշուց, Տ. Բազրատ վարդ. Վարդապետեան
Պարսկ. — Հնդկաստանի Առաջն. փոխանորդ՝ Ռուսաստանից,
Տ. Արսէն վարդ. Բագուից, Տ. Տիրայր վարդ. Աղէքսանդրա-
պոլից:

Մայր Աթոռի հիւրընկալութեան պաշտօնը, Տ. Գրիգորիս
վարդապետի հրաժարուելու պատճառաւ, յանձնուեց Տ.
Խոսրով վարդապետին:

Գեր. Տ. Յովհաննէս եպս. Շիրակունւոյ բացակայու-
թեան պատճառաւ, Վանական Կառավարութեան նախա-
դահի պաշտօնը յանձնուեց Գեր. Տ. Ղևոնդ եպս.-ին:
Իսկ Տ. Եղնիկ վարդապետի բացակայութեան ժամանակ տպա-
րանի տեսչութեան պաշտօնը յանձնուեց Բարձր. Տ. Մատ-
թէոս վարդապետին:

Երեւանի Թեմական դպրանոցի տեսուչ ընտրուեց և
հաստատուեց Բարձր. Տ. Տիրայր վարդապետը, որ ներ-
կայացրեց ի հաստատութիւն Վեհ. Հայրապետի իւր կաղը
մած ուսուցչական խմբի և դասերի ցուցակը: Հ. Տիրայ-

Աղէքսանդրապօլում կմայ փոխանորդական պաշտօնով մինչև
օգոստոսի 20-ը և ապա կերթայ Երևան իւր նոր պաշտօնին:

Շուշույ դպրանոցի տեսուչ առաջիկայ տարուայ համար
ևս հաստատուեց Բարձր. Տ. Բենիկ վարդ. որ մեկնեց Ապարան
կաղզուերուելու և պատրաստելու իւր տարեկան տեղեկագիրը:

Պետական խորհրդական Ազն. պ. Բեգլար Մարտիրո-
սեան Ստեփանեանց, ի յիշատակ իւր հանգուցեալ Մամիկոնե
որդույ՝ նուիրել է Մ. Աթոռի մատենադարանին 138 կտոր
Գերմաներէն գրքեր, գիտական (մեծ մասամբ քիմիական) բո-
վանդակութեամբ: Յանկալի էր, որ բաղմանային հետեողներ
այդ բարի օրինակի:

ՃԵՄԱՐԱՆ Մ. ԱԹՈՌՈՅ

Ճեմարանում քննութիւններն սկսուեցան ապրիլ 22-ին
և վերջացան մայիս 31-ին: Հրապարակական քննութիւնների
ենթարկուեցան միայն դպրանոցական և մասնագիտական բա-
ժիններն աւարտողները, այլ և Ա. և Բ. լսարանների ուսա-
նողներն՝ այդ լսարաններում աւարտած աւարկաներից: Իսկ
միւս դասարաններում դասերը շարունակուեցան մինչև մա-
յիս 18-ը, և յաջորդ շաբաթուայ ընթացքում տեղի ունե-
ցան դասարանական քննութիւններ:—Նախընթաց տարիներ
ի համեմատութեամբ ամենամեծ թուով ուսումնաւարաներ
եղան այս տարի՝ 13 հոգի, որոնք, և իրենց ներկայացրած
աւարտական շաբաղրութիւններն՝ են.

- 1) Ագուլեան Արամ Աղէքսանդրապօլցի—Մամիկոնեան տոհ-
մի պատմութիւնը.
- 2) Այթուհեան Գէորգ Ախալքալաքցի—Հայոց պատմութեան
վերաբերեալ տեղեկութիւնները Մոմզէնի Հռոմ. պատ-
մութեան մէջ.
- 3) Աղնաուրեան Սենեքերիմ Ալաշկերտցի—Գիրք թղթոցի
բովանդակած պատմական նիւթը.